Ցորեն եմ ցանել արտը

Կրկնակ.
Ցորեն եմ ցանե արտը, ծլե, կանաչե,
Հեռու տեղ ախպերմ ունիմ, անկաջը կանչե:

Կաքավ եմ քարի միջին, ցորեն եմ ցանե,
Ձեն կուտամ ձորի միջին, ցորեն եմ ցանե:

Հանդեն ծաղիկ քաղել եմ, ցորեն եմ ցանե,
Դաստա արել, կապել եմ, ցորեն եմ ցանե:

Կրկնակ.
Ցորեն եմ ցանե արտը, ծլե, կանաչե,
Հեռու տեղ ախպերմ ունիմ, անկաջը կանչե:

Կաքավ եմ, սար ման գուկամ, ցորեն եմ ցանե,
Բլբուլ եմ, բաղ ման գուկամ, ցորեն եմ ցանե:

Գնացել ու եկել եմ, ցորեն եմ ցանե,
Չարոխ գուլպես կոկել եմ, ցորեն եմ ցանե:

Կրկնակ.
Ցորեն եմ ցանե արտը, ծլե, կանաչե,
Հեռու տեղ ախպերմ ունիմ, անկաջը կանչե:

Խաղ կանչող իմ ախպերը, ցորեն եմ ցանե,
Կըպըտըտի սարերը, ցորեն եմ ցանե: